

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՎՈՂ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՍԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Արսեն ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Ազատ շուկայական տնտեսության կացութաձևն ընտրած Հայաստանի Հանրապետությունը, ինչպես յուրաքանչյուր զարգացող երկիր, ունի կանխիկ դրամի շրջանառության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործող մեխանիզմներ ունենալու խնդիր: Ջարգացած երկրներում այդպիսի մեխանիզմներ են հսկիչ-դրամարկղային մեքենաները (այսուհետ՝ ՀԴՄ), որոնց ներդրումը ՀՀ-ում լայն թափ ստացավ «ՀԴՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքի՝ ընդունմամբ: Այսօր էլ հսկողական գործիքներով հնարավոր ամեն ինչ արվում է ՀԴՄ-ների ներդրման, ինչպես նաև քաղաքացիների կողմից համապատասխան ՀԴՄ կտրոններ պահանջելու համար: Հսկողական գործիքների թվում կարելի է առանձնացնել ՀԴՄ կիրառման ճշտության ստուգումները, որոնք միշտ չէ, որ կարելի է հաջողված համարել՝ հիմնականում կապված ստուգողական գործողությունների կատարման իրավաչափության և սպասվող արդյունքների տեսանկյունից: Մասնավորապես, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը՝ սահմանում է, որ «Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առավազն երեք աշխատանքային օր առաջ,

տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ ... հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտությանն ուղղված դեպքերում իրականացվող ստուգումների ...» (3-րդ հոդվածի 3-րդ կետ), որը ոչ միանշանակ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Այդ մասին են վկայում նաև դատարանների իրարամերժ վճիռները և որոշումները: Մասնավորապես, մի դեպքում կարծիք է հայտնվում, որ հանձնարարագիրը պետք է ներկայացվի տնտեսավարող սուբյեկտին մինչև կոնկրետ ստուգողական գործողություններ սկսելը, այսինքն՝ գնում կամ հսկիչ գնում կատարելը³, իսկ մյուս դեպքում՝ հաշվի առնելով ՀԴՄ կիրառման ճշտության ստուգման առանձնահատկությունները՝ հանձնարարագիրը կարող է նաև տրամադրվել վերը նշված գործողություններից հետո⁴, այսինքն, փաստորեն, ստուգման ակտի (կամ միգուցե տեղեկանքի) հետ միաժամանակ: Երկրորդ տեսակետն իհարկե ավելի դյուրին է դարձնում օրենքի իրական խախտումները բացահայտելը, սակայն չպետք է մոռանալ նաև այն, որ այդ պարագայում տնտեսավարող սուբյեկտն ամբողջապես զրկվում է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված իրավունքների իրացման հնարավորությունից (օրինակ, նույն օրենքի 9-րդ հոդված): Այս ոլորտի ստուգումների հետ կապված խնդիրներն այսքանով չեն սպառ-

վում և վերաբերում են ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կատարած գնման կամ հսկիչ գնման փաստի ապացուցման, խախտման փաստի օրենքի պահանջներին համապատասխան արձանագրման և ստուգման ակտում ամրագրման և այլ հարցերին: Օրենքի գործողության ժամանակահատվածում կատարվել են բազմաթիվ ստուգումներ և կազմվել են ստուգման ակտեր: Կարևոր է նաև «ՀԴՄ-ներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքի ընդունումը⁵, որը նպատակ է հետապնդում ապահովելու տնտեսական գործունեության կասեցման օրինականությունը՝ լրացուցիչ երաշխիք դառնալով «ՀԴՄ մշակույթը» մեր հասարակության մեջ ներդրելու համար: Այս նպատակի համար օգտագործվում են ոչ միայն հսկողական, այլ նաև շահագրգռող, խրախուսող մեխանիզմներ, ինչպիսիք են, օրինակ, բոնուսների տրամադրումը, ՀԴՄ կտրոնների շահումների կազմակերպումը:

Այսպիսով, հարկային մարմնի՝ այս ոլորտում ակտիվ դերակատարումը նախանշված է ՀՀ օրենքներով, մասնավորապես՝ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքը⁶ սահմանում է, որ. «Հարկային մարմինը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կրում է նաև այլ պարտականություններ» (10-րդ հ.-ի 2-րդ մաս), որպիսին «ՀԴՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ուժով հանդիսանում է վերը նշված օրենքի կիրառման նկատմամբ հսկողությունը: Այսինքն, հարկային մարմինը հսկողություն է իրականացնում ՀՀ տարածքում ՀԴՄ-ների ներդրման, օգտագործման, գրանցման և հաշվառման հետ կապված հարաբերությունների նկատմամբ: Քննարկվող ոլորտում առկա մեկ այլ իրավական ակտի՝ «ՀԴՄ-ներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքի նկատմամբ ևս հսկողություն է իրականացնում, և լիազորված մարմին է հարկային մարմինը: Ուստի այս հոդվածում կներկայացնենք վերը նշված երկու իրավական ակտերով պա-

տասխանատվություն առաջադրող իրավական նորմերը:

I. ՀԴՄ-ների հիմնական գործառույթը կանխիկ դրամի շրջանառության նկատմամբ պետության կողմից հսկողության իրականացումն է, որը նշված է «ՀԴՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքում⁷:

Այսպիսով, «ՀԴՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքը սահմանել է պատասխանատվություն վերը նշված օրենքի, ինչպես նաև նույն օրենքի 5-րդ հոդվածում նշված կարգերի պահանջների խախտման համար: Մասնավորապես, դրան նվիրված է նույն օրենքի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելը» վերտառությամբ 11-րդ հոդվածը, որն ընդգրկում է 4 իրավախախտումների կազմեր: Բոլոր 4 իրավախախտումների թե օբյեկտը, թե սուբյեկտը և թե սուբյեկտիվ կողմը նույնն են: Այսպիսով, այս իրավախախտումների օբյեկտը պետության կողմից հսկողության իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

Սուբյեկտները՝ կազմակերպությունները (այդ թվում՝ ՀՀ տարածքում գործող իրավաբանական անձինք, դրանց առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), ՀՀ տարածքում գործող օտարերկրյա կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ)) և անհատ ձեռնարկատերերն են (այդ թվում՝ նոտարներ և փաստաբանական գործունեություն իրականացնողներ), որոնք պարտավոր էին ունենալ ՀԴՄ-ներ իրենց գործունեության վայրերում: Միաժամանակ, «ՀԴՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքը չի տարածվում ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող բանկերի (ներառյալ՝ դուստր բանկերի), դրանց մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործառնական գրասենյակների (կետերի), օտարերկրյա բանկերի՝ Հայաս-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

տանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձանց՝ միայն այդ գործունեության մասով, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների (այդ գործունեության մասով), գրավատների, վճարահաշվարկային կազմակերպությունների վրա (3-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ինչ վերաբերում է *սուբյեկտիվ կողմին*, ապա այս դեպքում ևս, ինչպես և հարկային իրավախախտումների պարագայում⁸, «ՀԴՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքը որևէ կարգավորում չի պարունակում, ուստի պետք է ենթադրել, որ մեղքի ձևը (*օբյեկտիվ* կողմը հանդիսացող արարքը դիտավորությամբ թե անզուգուշությամբ կատարված) օրենսդիրը չի կարևորում նման իրավախախտման համար պատասխանատվություն սահմանելիս:

Հոդված 11. Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելը

1. Սույն օրենքով սահմանված դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական գործարքներ իրականացնելու վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է երեք հարյուր հազար դրամի չափով:

Տուգանքը նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է վեց հարյուր հազար դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է մինչև սահմանված կարգով հսկիչ-դրամարկղային մեքենայի ներդրումը:

Այս իրավախախտման *օբյեկտիվ կողմը* դրսևորվում է համապատասխան դեպքերում և վայրերում ՀԴՄ-ների բացակայությամբ:

Մասնավորապես, համապատասխան դեպքերը և վայրերը սահմանված են «ՀԴՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, համաձայն որի. «*Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի*»: Այսինքն, տնտեսավարող սուբյեկտների կողմից առևտրի օբյեկտների, այն է՝ գույքային համալիր (հողամաս, շենք, կառույց), որն օգտագործվում է ապրանքների առուվաճառքի համար⁹, առևտրի իրականացման վայրերում, այն է՝ առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ, այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված ապրանքի¹⁰ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) ՀԴՄ կիրառումը պարտադիր է՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այսինքն, ՀԴՄ կիրառումը պարտադիր է ոչ միայն ամենօրյա մանրածախ վաճառք իրականացնելիս, օրինակ՝ զանազան սննդամթերք

(հաց, երշիկ, կաթ և այլն) կամ տեխնիկա (հեռուստացույց, հեռախոս և այլն) կամ ծառայություններ մատուցելիս, օրինակ՝ վարսահարդարում և այլն, իրականացվող ամբողջական վճարումների ժամանակ, այլ նաև դրանց կանխավճարների ժամանակ, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը նախօրոք որոշակի գումար է վճարում մինչև համապատասխան ապրանքի ստանալը կամ ծառայության մատուցումը: Միաժամանակ, վերը նշված օրենքը՝ ի դեմս 4-րդ հոդվածի, ոչ թե սահմանել է գործունեության կոնկրետ տեսակներ, որոնցով ՀՀ-ների կիրառումը պարտադիր է, այլ բացասման սկզբունքով սահմանել է այն գործունեության տեսակները, որոնցով ՀՀ-ների կիրառումը պարտադիր չէ¹¹:

Այս իրավախախտման սանկցիան դրսևորվում է տուգանքի ձևով, որը հաշվարկվում է *օբյեկտիվ կողմը* հանդիսացող արարքի կատարման համար երեք հարյուր հազար դրամի չափով: Միաժամանակ, հակաիրավական արարքը տուգանքը նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկնելու դեպքում սանկցիան կրկնապատկվում է, այսինքն՝ տուգանքը հաշվարկվում է վեց հարյուր հազար դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է մինչև ՀՀ-ի սահմանված կարգով ներդրումը:

Միաժամանակ, հարկային մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմոծելու դեպքում տուգանքը կրկնապատկվում է:

Այս իրավախախտման *օբյեկտիվ կողմի* դրսևորման պարագայում պատասխանատվություն է սահմանված նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.1-րդ հոդվածով¹²:

2. Հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և /կամ շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումն առաջին անգամ կրկնելու դեպ-

քում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է երեք հարյուր հազար դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով: Գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում:

Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումը երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է վեց հարյուր հազար դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 10 օրով: Գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում: Սույն մասում նշված խախտումը թույլ տված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկը հարկային մարմնի ղեկավարի կողմից ենթակա է հրապարակման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Այս իրավախախտման *օբյեկտիվ կողմը* դրսևորվում է ՀՀ-ների գրանցման կարգի և/կամ շահագործման կանոնների խախտմամբ ՀՀ-ների կիրառմամբ: Մասնավորապես, ՀՀ-ների գրանցման կարգը և շահագործման կանոնները հաստատված են ՀՀ կառավարության 2004 թ. օգոստոսի 26-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 1325-Ն որոշմամբ¹³:

Այս իրավախախտման սանկցիան դրսևորվում է տուգանքի ձևով, որը հաշվարկվում է *օբյեկտիվ կողմը* հանդիսացող արարքի կատարման համար հարյուր հիսուն հազար դրամի չափով: Միաժամանակ, տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, հակաիրավական արարքը առաջին անգամ կրկնելու դեպքում սանկցիան կրկնապատկվում է, այսինքն՝ տուգանքը հաշվարկվում է երեք հարյուր հազար դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով:

Իսկ ահա տուգանքը նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում հակաիրավական արարքը երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում սանկցիան նորից կրկնապատկվում է, այսինքն՝ տուգանքը հաշվարկվում է վեց հարյուր հազար դրամի չափով, և իրավախախտի գործունեությունն այդ մասով կասեցվում է 10 օրով:

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Միաժամանակ, տուգանքը հարկային մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո՝ երկամսյա ժամկետում, չմոտեցնելու դեպքում կրկնապատկվում է: Երկու դեպքում էլ գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում:

Գործունեության կասեցումն իրականացվում է «ՀԴՄ-ների կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ հարկային մարմնի ղեկավարի համապատասխան որոշման հիման վրա:

Իրավախախտների ցանկը հարկային մարմնի ղեկավարի կողմից ենթակա է հրապարակման՝ ՀՀ կառավարության 2006թ. ապրիլի 27-ի «Հաշվետու տարվա արդյունքներով հարկային մարմնի կողմից հարկ վճարողների (ապահովադիրների) վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 582-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Իրավախախտի գործունեության կասեցումը կարող է փոխարինվել տուգանքի վճարմամբ: Գործունեության կասեցումը փոխարինվում է տուգանքով իրավախախտի գրավոր համապատասխան դիմումի և սահմանված չափով հաշվարկվող տուգանքի վճարումը հաստատող փաստաթղթի (անդորրագրի) ներկայացման դեպքում: Տուգանք վճարվում է կասեցումը չկիրառելու յուրաքանչյուր օրվա համար՝ տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված ՀԴՄ-ներով նախորդ ամսվա ընթացքում արձանագրված միջին օրական շրջանառության երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս վաթսուս հազար դրամից: Կասեցման ընթացքում դիմում ներկայացնելու դեպքում սահմանված տուգանքը վճարվում է դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող օր-

վանից մինչև կասեցման ավարտը յուրաքանչյուր օրվա համար: Գործունեության կասեցման ժամկետի ընթացքում դիմում ներկայացնելու դեպքում կասեցումը դադարեցվում է դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից:

Այս իրավախախտման *օբյեկտիվ կողմի* դրսևորման պարագայում պատասխանատվություն է սահմանված նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.1–րդ հոդվածով:

3. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ համապատասխան ժամկետից հետո հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենա չկիրառելու կամ հսկիչ-դրամարկղային մեքենային միացվող համապատասխան սարք չտեղադրելու համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը նախազգուշացվում է:

Նախազգուշացումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի երկրորդ պարբերությունում նշված խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է երեք հարյուր հազար դրամի չափով, և համապատասխան օբյեկտի գործունեությունը կասեցվում է՝ մինչև ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենայի կիրառումը կամ հսկիչ-դրամարկղային մեքենային միացվող համապատասխան սարքի տեղադրումը:

Այս իրավախախտման *օբյեկտիվ կողմը* դրսևորվում է՝

1. «ՀԴՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ համապատասխան ժամկետից⁴ հետո ՀԴՄ-ի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենա չկիրառելու ձևով,

2. ՀԴՄ-ին միացվող համապատասխան սարք (ՀԴՄ-ի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ ցանցային

կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենա) չտեղադրելու ձևով:

«ՀԴԱ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի համաձայն. «Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնք կիրառում են հսկիչ-դրամարկղային մեքենաներ, պարտավոր են... դ) ապահովել ցանցային կապի միջոցներով յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով (այդ թվում՝ արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի գործունեության մասով կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաներով, համակարգչային սարքավորումներով) օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին:

2012 թվականի հունվարի 1-ից կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կարող են կամավոր հարկային մարմին ուղարկել հսկիչ-դրամարկղային մեքենաների կողմից օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը ցանցային կապի միջոցներով: Սույն պարբերությունում նշված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգումներ անցկացվում են միայն ստուգումների անցկացման ռիսկային չափանիշների հիման վրա՝ հարկ վճարողի գործունեությունը ռիսկային դիտարկելու դեպքերում»:

Այս իրավախախտման սանկցիան, ի տարբերություն նախորդների, դրսևորվում է նախազգուշացման ձևով: Միաժամանակ, տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, հակաիրավական արարքը առաջին անգամ կրկնելու դեպքում իրավախախտման սուբյեկտը ենարկվում է պատասխանատվության տուգանքի ձևով, որը հաշվարկվում է հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Իսկ ահա տուգանքը նշանակելուց հե-

տո՝ մեկ տարվա ընթացքում, հակաիրավական արարքը կրկնելու դեպքում սանկցիան կրկնապատկվում է, այսինքն՝ տուգանքը հաշվարկվում է երեք հարյուր հազար դրամի չափով, և համապատասխան օբյեկտի գործունեությունը կասեցվում է՝ մինչև ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենայի կիրառումը կամ ՀԴԱ-ին միացվող համապատասխան սարքի տեղադրումը:

Միաժամանակ, տուգանքը հարկային մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չնուժեցնելու դեպքում կրկնապատկվում է:

4. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ համապատասխան ժամկետից հետո հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը հարկային մարմին ուղարկելը չապահովելու (հսկիչ-դրամարկղային մեքենայի, ցանցային կապի միջոցի անխափան աշխատանքը չապահովելու) համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ բացառությամբ կապի անբավարարության կամ բացակայության պատճառով տեղեկությունը չուղարկելու դեպքերի: Կապի անբավարար որակի կամ դրա բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմինը կապ տրամադրող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացված տվյալները տրամադրում է հարկային մարմնին:

Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է երեք հարյուր հազար դրամի չափով:

Այս իրավախախտման օբյեկտիվ կողմը դրսևորվում է՝ «ՀԴԱ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ համապատասխան ժամկետից հետո հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը հարկային մարմին ուղարկելը չապահովելու (հսկիչ-դրամարկղային մեքենայի, ցանցային կապի միջոցի անխափան աշխատանքը չապահովելու) ձևով:

Այս իրավախախտման սանկցիան

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ

ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

դրսևորվում է տուգանքի ձևով, որը հաշվարկվում է *օբյեկտիվ կողմը* հանդիսացող արարքի կատարման համար հարյուր հիսուն հազար դրամի չափով: Միաժամանակ, օրենսդիրը նախատեսել է բացառություն տուգանքը կիրառելու համար, այն է՝ տեղեկությունները չուղարկելը կապի անբավարարության կամ բացակայության պատճառով:

Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, հակաիրավական արարքը կրկնելու դեպքում սանկցիան կրկնապատկվում է, այսինքն տուգանքը հաշվարկվում է երեք հարյուր հազար դրամի չափով:

Միաժամանակ, հարկային մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմուծելու դեպքում տուգանքը կրկնապատկվում է:

II. Ինչպես տեսանք, ՀՂՄ-ների գրանցման կարգի և/կամ շահագործման կանոնների խախտմամբ ՀՂՄ-ների կիրառման համար պատասխանատվություն սահմանող իրավական նորմերում սանկցիան դրսևորվում է ոչ միայն տուգանքով, այլ նաև իրավախախտման սուբյեկտի գործունեության որոշակի ժամկետով կասեցմամբ: Այս հարաբերությունները հիմնականում կարգավորված են «ՀՂՄ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, կարգավորված են կասեցման հիմքերը, կարգը, գործունեության կասեցման կապակցությամբ ծագող հարաբերությունները, և սահմանված է վերը նշված օրենքի խախտման համար պատասխանատվությունը, որին էլ առավել մանրամասն կանդրադառնանք ստորև:

Այսպես, «ՀՂՄ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքը պատասխանատվությունը սահմանող նորմերին հատկացրել է մեկ հոդված (8-րդ հոդված), այն է.

Հոդված 8. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջների խախտման համար

1. Գործունեության կասեցման ընթացքում գործունեության կասեցման օբյեկտի տարածքի մուտքը (մուտքերը) կամ տարածք մուտք գործելու այլ հնարավոր ուղիները կնքելու, կապարակնքելու, դրոշմելու, թվային, տառային կամ կիրառված այլ դրոշմավորման եղանակը առաջին անգամ վնասելու և կասեցման օբյեկտում կասեցման մասին որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն առաջին անգամ իրականացնելու դեպքում կասեցման սուբյեկտները տուգանվում են երեք հարյուր հազար դրամի չափով:

Նույն որոշմամբ գործունեության կասեցման ընթացքում սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված խախտումը երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում կասեցման սուբյեկտները տուգանվում են երկու միլիոն դրամի չափով:

2. Տուգանքը նշանակվում է գործունեության կասեցման մասին որոշում ընդունած լիազորված մարմնի ղեկավարի որոշմամբ:

3. Սույն հոդվածի առաջին մասով սահմանված տուգանքը նշանակման օրվանից եռամսյա ժամկետում չվճարվելու դեպքում կրկնապատկվում է:

4. Սույն հոդվածով սահմանված տուգանքների գումարների երեսուն տոկոսի չափով մասհանումները գանձվում են «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդ:

Այս իրավախախտման *օբյեկտը*, *սուբյեկտը* և *սուբյեկտիվ կողմը* նույնական են «ՀՂՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավախախտումների համանուն տարրերին: Ինչ վերաբերում է *օբյեկտիվ կողմին*, ապա այն դրսևորվում է գործունեության կասեցման ընթացքում գործունեության կասեցման օբյեկտի տարածքի մուտքը (մուտքերը) կամ տարածք մուտք գործելու այլ հնարավոր ուղիները

1. կնքելու թվային, տառային կամ կիրառված այլ դրոշմավորման եղանակը առաջին անգամ վնասելու և կասեցման օբյեկտում կասեցման մասին որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն իրականացնելու ձևով,

2. կապարակնքելու թվային, տառային կամ կիրառված այլ դրոշմավորման եղանակը առաջին անգամ վնասելու և կասեցման օբյեկտում կասեցման մասին որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն իրականացնելու ձևով,

3. դրոշմելու թվային, տառային կամ կիրառված այլ դրոշմավորման եղանակը առաջին անգամ վնասելու և կասեցման օբյեկտում կասեցման մասին որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն իրականացնելու ձևով,

րառված այլ դրոշմավորման եղանակը առաջին անգամ վնասելու և կասեցման օբյեկտում կասեցման մասին որոշմամբ սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն իրականացնելու ձևով:

Այս իրավախախտման սանկցիան դրսևորվում է տուգանքի ձևով, որը հաշվարկվում է *օբյեկտիվ կողմը* հանդիսացող արարքի առաջին անգամ կատարման համար երեք հարյուր հազար դրամի չափով: Նույն որոշմամբ *օբյեկտիվ կողմը* հանդիսացող արարքի երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում տուգանքը հաշվարկվում է երկու միլիոն դրամի չափով:

Տուգանքը նշանակվում է հարկային

մարմնի ղեկավարի որոշմամբ: Սիաժամանակ, տուգանքը հարկային մարմնի ղեկավարի կողմից նշանակման օրվանից եռամսյա ժամկետում չվճարելու դեպքում կրկնապատկվում է:

Ինչպես տեսնում ենք, ՀՊՄ-ների հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը պարունակում են մի շարք իրավախախտումների կազմեր՝ զգալի չափերի հասնող տուգանքներով, որոնց սահմանումով օրենսդիրը փորձ է կատարել կանխարգելելու հնարավոր խախտումները և մեր հասարակության մեջ զարգացնելու «ՀՊՄ կիրառման մշակույթը»:

¹ Տե՛ս ՀՀ ՊՏ 2004.12.18/68.1:

² Տե՛ս ՀՀ ՊՏ 2000.06.23/14(112):

³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. մարտի 4-ի թիվ ՎԴ/5848/05/08 «Աթար Դիվայր» ՓԲԸ ընդդեմ ՀՀ ԿԱ ՀՊԾ» վարչական գործով կայացված որոշումը:

⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. հուլիսի 6-ի թիվ 3-951(ՏԳ) «ՀՀ ԿԱ ՀՊԾ ընդդեմ «Ուրարտու-Ալեն» ՍՊԸ» դատական գործով կայացված որոշումը:

⁵ Տե՛ս ՀՀ ՊՏ 2006.12.25/66 (521):

⁶ Տե՛ս ՀՀ ՊՏ 2002.08.14/33 (208):

⁷ Պետք է նշել, որ «ՀՊՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքը սահմանել է, որ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում էլ ՀՊՄ-ների կիրառումը պարտադիր է՝ բացառություններով (տե՛ս 4-րդ հոդվածը): Սակայն անկամիսիկ հաշվարկները ՀՊՄ-ներով ֆիքսելու այս առանձնահատկությունը պայմանավորված է ՀՊՄ կտրոններով տրամադրվող բոնուսների, շահումների պատճառով ստեղծված անհրաժեշտությամբ: Այսինքն, պլաստիկ քարտերով մանրածախ առևտուր կատարող գնորդները ևս այս պարագայում ստանում են ՀՊՄ կտրոն և կարող են մասնակցել դրանցով տրամադրվող բոնուսներին:

⁸ Տե՛ս Հարկային իրավախախտումներ (գիտագործնական վերլուծություն)/ Ա.Ս.Նիկողոսյան – եր.: ԵՊՀ հրատ., 2010թ.:

⁹ Տե՛ս «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը (ՀՀ ՊՏ 2004.12. 28/72 (371)):

¹⁰ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 508-րդ հոդվածը (ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50)):

¹¹ Պետք է նշել, որ այս ցանկը ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, և հիմնական միտումը վկայում է գործունեության ավելի ու ավելի շատ ոլորտներում ՀՊՄ-ների կիրառման աճի մասին:

¹² Տե՛ս ՀՍՍՀԳՍՏ 1985/23:

¹³ Տե՛ս ՀՀ ՊՏ 2004.10.13/55(354):

¹⁴ Ցանցային կապի միջոցներով հսկիչ-դրամարկղային մեքենաների կողմից օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին պարտադիր է՝

- 2013 թվականի հունվարի 1-ից՝ ամսական ԱԱՀ վճարող համարվող հարկ վճարողների համար,

- 2014 թվականի հունվարի 1-ից՝ եռամսյակային ԱԱՀ վճարող համարվող հարկ վճարողների համար,

- 2015 թվականի հունվարի 1-ից՝ ԱԱՀ վճարող չհամարվող հարկ վճարողների համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված բնակավայրերում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի («ՀՊՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետ):

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ****THE RESPONSIBILITY REALIZED BY TAX AUTHORITY
FOR THE VIOLATION OF LEGAL ACTS WHICH
REGULATE THE RELATIONS CONNECTED
WITH CASH REGISTER MACHINE****Arsen NIGKOGHOSYAN**

*Docent, YSU, Chair of Civil Procedure
Candidate of Legal Sciences*

The Republic of Armenia which selects free market economy formation as every developing country has a problem to have acting mechanisms for controlling cash turnover. Such a mechanism in developed countries are cash register machines (hereinafter CRM), whose implementation has got broad sweep by enactment of “The Law on Usage of CRMs” of the RA. Today also it is not spread no efforts with possible inspection tools by tax authorities to implement CRMs as well as to

induce consumers for demanding appropriate cash vouchers.

According to the article 9 of “The Law on Usage of CRMs” of the RA tax authority exercises control over the relations connected/keeping associated with implementation, usage, registration and record of CRMs. There is another legal act in the discussed area, which is the “Law on Suspension of Activities of Users of CRMs” of the RA. This law also oversees by Tax Authority. At the same time Tax Authority is the Authority of this law. Therefore, in this article the composition of offenses under the above mentioned two legal acts is analyzed. In other words, it is presented their object, subject, objective and subjective aspects.